ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը ս. Հռիփսիմե տաճարում քահանայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Հովսեփ քհն. Հակոբյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում իր ուխտի քարոզը՝ «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11) բնաբանով:

* * *

Նույն օրը Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում քահանայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Թադեոս քհն. Ավագյանը:

* * *

Փետրվարի 3-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում աբեղայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Թորգոմ աբեղա Մուշեղյանը:

* * *

Փետրվարի 6-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշե) բնաբանով:

Քարոզիչ տեր հայրը հավատացյալ ժողովրդին է ներկայացնում Վարդանանց հերոսամարտի համառոտ պատմությունը, ապա շեշտում հայ ժողովրդի այն բարձր գիտակցությունը, որով հանուն հավատի և հայրենյաց նահատակությամբ կարելի է հասնել անմահության:

Ս. պատարագի ավարտին Իջման ս. սեղանի առաջ հանդիսավորապես կատարվում է հայրապետական մաղթանք՝ նվիրված Նորին Վեհափառություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոսի անվանակոչության տոնին:

* * *

Նույն օրը, օրվա տոնի առիթով, Երևանի ս. Զորավոր եկեղեցում պատարագում է Մայր Աթոռի միաբան տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում

«Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է, վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան» (Սաղմ. ԼԶ 39) բնաբանով:

Քարոզում հայր սուրբը շեշտում է այն միտքը, որ Աստված օգնում է այն մարդկանց, որոնք հոգևոր, բարոյական ու մարդասիրական բարձր իդեալներ ունեն: Հայ ժողովուրդը եղել է միշտ իր հավատքի և հայրենիքի գաղափարապաշտը, նույնիսկ ամենածանր օրհասական օրերին, միշտ գիտակցելով, որ առանց հավատքի և հայրենիքի որևէ ազգ չի կարող գոյատևել: Այդպիսի հերոսական պայքարի մի փայլուն օրինակ է Վարդանանց հերոսամարտը: Եվ այսօր ս. Վարդանը իր հետևորդներով հրճվում է արքայության լուսավոր կամարների ներքո՝ տեսնելով հայ ժողովրդի այսօրվա փառավոր ներկան և է՛լ ավելի փայլուն ապագան:

*
* *

Նույն օրը, ժամը 13-ին, ս. Վարդանանց տոնի կապակցությամբ, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում տոնակատարության հանդես՝ նախագահությամբ Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Նախագահության սեղանի շուրջ տեղ էին գրավել նաև տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ, տ. Արիս եպիսկոպոսները:

Հանդեսը սկսվում է Հայաստանի պետական հիմնի նվագով, որին հաջորդում է «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը՝ ոգեկոչելով Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակը:

Օրվա հիմնական խորհրդին նվիրված գրավոր զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի քարտուղար-դասախոս Բարսեղ Թաշճյանը:

Հարգելի բանախոսը նախ շեշտում է, որ «Եթե մինչև այսօր մեր ժողովուրդը ոգևորությամբ և հպարտությամբ է տոնել, և այսուհետև էլ տոնելու է Ավարայրի դաշտում զոհված նահատակների հիշատակը, այդ նրա համար է, որ Վարդանանց պատերազմը խորհրդանշան է ազգային արժեքները և սրբությունները, հայրենիքը և խղճմտանքի ազատությունը պաշտպանելու համար հայ ժողովրդի մղած հերոսական անհավասար մարտնչումների»:

Այնուհետև բանախոսը հանգամանորեն վերլուծում է Վարդանանց ապստամբության նախադրյալները և դրդապատճառներն ու անում հետևյալ եզրակացությունը.

«Ավարայրում պարտվեցին հայերը. զոհվեցին Վարդանն ու իր ընկերները, 1036 հոգի՝ գիտակցելով, որ իրենց նահատակությամբ հաղթելու է գաղափարը, ոգին:

Եվ այդ իմաստով նրանք հաղթանակեցին:

Այդ ոգով է ոգեշնչվել հետագա դարերին հայ ժողովուրդը, երբ ամեն անգամ գալարվել է իրար հաջորդող անօրենների կրունկների տակ ու զրահավորվել, երբ հարկ է եղել մարտնչել իր ազգությանը և գոյությանը սպառնացող աղետների դեմ:

Այդ ոգին ներշնչել ու թևավորել է հայ ժողովրդի զավակներին, մեր արվեստագետներին ու երաժիշտներին, մեր վիպասաններին ու բանաստեղծներին:

Հայ ժողովրդի զավակների համար Վարդանանք և Ղևոնդյանք մարմնավորումն են մեր ազգի գաղափարականի, որի մեջ պատկերվել է առաքինությունը, հավատքը, հույսը: Վարդանանք և Ղևոնդյանք խտացումն են արիության այն բոլոր դրվագների, որոնցով այնքան հարուստ է մեր պատմությունը:

Առանց այդ գաղափարականի և ոգու չի լինի հայ ժողովուրդ»:

Վերջում օրվա բանախոսն ավելացնում է.

«Վարդանանց և Ղևոնդյանց այս տոնի առթիվ պարտք ենք համարում հիշել, որ այսօր տոնն է անվանակոչության ազգիս Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, մարմնացումը Ղևոնդյան հոգևորականության:

Շնորհավորում ենք ու սրտագին մաղթում, Իր գահակալության 20-րդ տարեդարձի առթիվ, որ Աստված երկար կյանք տա Նորին Սուրբ Օծությանը, որպեսզի այսուհետև ևս, Ղևոնդյանց նույն ոգով, շարունակի առաջնորդել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ու հայ ժողովրդին՝ դեպի ավելի պայծառ ապագա:

Թող անսասան մնա Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որով շնչում և ապրում է հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Թող Աստված անփորձ պահի մեր սիրեցյալ Հայրապետին»:

Բանախոսությունից հետո գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի հայտագիր՝ հոգևոր ճեմարանի ուսանողության կատարմամբ:

Հանդեսի վերջում օրհնության խոսք է ասում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հանդեսն ավարտվում է միաբերան երգված Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

*
* *

Փետրվարի 9-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Հովսեփ քհն. Հակոբյանը:

«Հայր մեր»-ից առաջ իր անդրանիկ քարոզն է խոսում տ. Թորգոմ աբեղա Մուշեղյանը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակաց Ա 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 11-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

*
* *

Փետրվարի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում են տ. Թորգոմ աբեղա Մուշեղյանի, տ. Հովսեփ քհն. Հակոբյանի և տ. Թադեոս քհն. Ավագյանի անդրանիկ քարոզները:

*
* *

Նույն օրը, առավոտյան, Մայր տաճարում հանդիսավորապես սկսվում է պաշտվել Արեվագալի ժամերգության կարգը, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 13-ին, հինգշաբթի.—Նախատոնակ Տեառնընդառաջի.

Այսօր երեկոյան Մայր տաճարում հանդիսավորությամբ պաշտվում է երեկոյան ժամերգության և նախատոնակի կարգը, որոնց ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Ժամը 19.30-ին մարզադաշտում տեղի է ունենում Տյառնընդառաջի ավանդական հրավառության հանդեսը: Խարույկը վառում է Վեհափառ Հայրապետը՝ ներկաների ծափերի և ողջույնների ներքո:

Ժամը 20.30-ին միաբանական սեղանատանը տրվում է ընթրիք, որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսությունն ու ուսանողությունը:

*
* *

Փետրվարի 14-ին, ուրբաթ.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ աբեղա Պետրոսյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում հանդիսավորապես կատարվում է հսկման առաջին արարողությունը, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 16-ին, կիրակի.—Բ. կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ աբեղա Մուշեղյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ քրիստոնեական բարոյակրթական անհրաժեշտության մասին:

*
* *

Փետրվարի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Հնդկաստան աշխարհի և նրա ժողովուրդների մասին հանգամանալից զեկուցում է կարդում տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Հավաքույթին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 23-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արիս եպս. Շիրվանյանը՝ «Հայր մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկ. ԺԵ 21) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 27-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում ՍՍՀՄ առողջապահության մինիստրության մանկաբարձության գծով մինիստրի տեղակալ Ելենա Նովիկովան:

Վեհափառ Հայրապետի և հարգարժան հյուրի միջև տեղի է ունենում զրույց՝ միմյանց հետաքրքրող մի քանի հարցերի շուրջ: